ՀԱՍՏԱՏՎԱԾ է

Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր պետական
գույքի կառավարման վարչության պետի

«15» 12 2009թ.

N 115-Ա հրամանով

Վարչության պետ՝

Կ.Կիրակոսյան

Տպագրված է ընդամենը 5 օրինակից

Օրինակ 1

ԳՐԱՆՑՎԱԾ է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ԿՈՂՄԻՑ 08.10.2004թ.

Գրանցման N222.210.00408

Վկայական N 03Ա066283

Թիվ001/2 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից

«21» 12 2009 թ.

պետական ռեգիստրի ղեկավար

Ա. Թորոսյան

# «ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(նոր խմբագրություն)

# 1. Ընդհանուր դրույթներ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N689-Ն որոշման համաձայն «Շահագործման տնտեսություն» պետական փակ բաժնետիրական ընկերության և «Ընկերությունների աջակցման և պետական գույքի գնահատման գործակալության» պետական ոչ առևտրային կազմակերպությունը միաձուլման ձևով վերակազմակեպվել են «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալության» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետև՝ պետական կազմակերպություն), որը հանդիսանում է վերը նշված կազմակերպությունների իրավահաջորդը:

2. Պետական կազմակերպությունն իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող ոչ առևտրային կազմակերպություն է:

3. Պետական կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

4. Պետական կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

5. Պետական կազմակերպության աշխատողների միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

6. Պետական կազմակերպությունը, որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Պետական կազմակերպությունն իր իրավասության սահմաններում իր գործունեություններով կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ ու կրել պարտականություններ, ինչպես նաև հանդես գալ դատարանում որպես հայցվոր կամ պատասխանող:

7.Պետական կազմակերպությունն ունի գինանշանի պատկերով և իր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանմամբ կլոր կնիք: Պետական կազմակերպությունը կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

8. Պետական կազմակերպության լրիվ անվանումը և գտնվելու վայրը՝

հայերեն՝ «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն

Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Զաքիյան 10

ռուսերեն՝ Государственная некомерческая организация ,, По инвентаризации и оценке государственного имущества,,

Республика Армения, г. Ереван, Закиян 10

անգլերեն՝ ,, Agency of State property inventary and estimate ,, Governmental non-profit organization

Republic of Armenia, Yerevan, Zakijan 10

## II Պետական կազմակերպության գործունեության առարկան

9. Պետական կազմակերպության գործունեության հիմնական առարկան է՝

9.1.Հայաստանի Հանրապետության պետական գույքի գույքագրման աշխատանքների իրականացումը,

9.2. Հայաստանի Հանրապետության պետական գույքի հաշվառումը,

9.3. Հայաստանի Հանրապետության պետական գույքի (այդ թվում՝ մասնավորեցվող (օտարվող) արժեքի որոշումը (գնահատում և վերագնահատում),

9.4. հրապարակային սակարկություններով մասնավորեցման, ինչպես նաև լուծարման գործընթացում գտնվող ընկերությունների՝ համապատասխանաբար աճուրդային, մրցութային և լուծարման հանձնաժողովների հանձնարարությունների կատարումը (հանձնակատարի աշխատանքների իրականացումը),

9.5.մասնավորեցվող ընկերություններին տնտեսագիտական բնույթի խորհրդատվությունը,

9.6. ընկերությունների լուծարումից հետո պետական բաժնեմասին համապատասխան գույքի պահառության աշխատանքների իրականացումը:

## III. Պետական կազմակերպության գործունեության նպատակները

10. Պետական կազմակերպության գործունեության հիմնական նպատակներն են՝

10.1. Հայաստանի Հանրապետության պետական գույքի մասնավորեցման և մասնավորեցման նախապատրաստական աշխատանքների ընթացակարգերի արդյունավետության բարձրացումը,

10.2. Հայաստանի Հանրապետության պետական գույքի հաշվառման ռեեստրի վարման աշխատանքներին աջակցելը,

10.3 Հայաստանի Հանրապետության պետական գույքի շահագործման արդյունավետության ապահովումը:

11. Պետական կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության հիմնական տեսակներն են՝

ա) գույքագրում,

բ) գույքի արժեքի որոշում (գնահատում, վերագնահատում)

գ) տեղեկատվության տրամադրում և խորհրդատվություն,

դ) պետական գույքի մասնավորեցման (մասնավորեցման նախապատրաստական աշխատանքների) և կազմակերպությունների լուծարման գործընթացներում հանձնակատարի պայմանագրով նախատեսված գործառույթների իրականացում:

## IV. Պետական կազմակերպության գործառույթները

12. Պետական կազմակերպությունը Հիմնադրի կամ Լիազորված պետական մարմնի հանձնարարությամբ իրականացնում է նաև հետևյալ գործառույթները.

12.1 վարձակալների և անհատույց օգտագործողների հետ կնքում է տարածքի օգտագործման և սպասարկման ծառայություն մատուցելու պայմանագրեր

*Տպագրված է 5 օրինակից*

Օրինակ N 4

***ՀԱՍՏԱՏՎԱԾ Է***

Հայաստանի Հարապետության
կառավարությանն առընթեր պետական
գույքի կառավարման վարչության պետի
2015 թվականի հոկտեմբերի 06-ի
N 113-Ա հրամանով:

Գլխավոր տնօրենը՝ Ս. Ստեփանյան

***ԳՐԱՆՑՎԱԾ Է***

ՀՀ իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից
08.10.2004 թ., գրանցման համարը՝
222.210.00408, վկայական՝ 03Ա 085321,
հարկ վճարողի հաշվառման համար՝ 02562123,
21.12.2009 թ. գրանցված կանոնադրության թիվ
002.3 փոփոխությունը գրանցված է ՀՀ իրավա-
բանական անձանց պետական ռեգիստրի
գործակալության կողմից 06.10.2015 թ.:

_____/_____/

# «ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

# Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## (լրացում)

Կազմված է՝ 06.10.2015 թ.
Բաղկացած է՝ 2 թերթից

ք. Երևան 2015 թ.

«Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության.

1) 9-րդ կետը լրավում է հետևյալ բովանդակությամբ նոր 9.7-րդ ենթակետով՝ ***«9.7. պետական սեփականություն հանդիսացող, այդ թվում՝ օտարման ենթակա շարժական գույքի պահառության աշխատանքների կազմակերպումը, տեխնիկական սպասարկումը և ընթացիկ վերանորոգման աշխատանքների իրականացումը»***,

2) կանոնադրության 12-րդ կետը լրացվում է հետևյալ բովանդակությամբ նոր 12.16-րդ ենթակետով՝ ***«12.16. կազմակերպում է պետական սեփականություն հանդիսացող, այդ թվում՝ օտարման ենթակա շարժական գույքի պահպանությունը, տեխնիկական սպասարկումն ու ընթացիկ վերանորոգումը, ինչպես նաև ապահովում է պատշաճ պայմաններ այդ աշխատանքների իրականացման համար (ներառյալ՝ համապատասխան ապրանքների ու ծառայությունների ձեռքբերման միջոցով):»***:

*Սույն լրացումը հանդիսանում է «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ-ի կանոնադրության (գրանցված՝ 21.12.2009 թ.) բաղկացուցիչ մաս:*